ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում

Հետանկախացման շրջանում գիտակրթական ոլորտը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սկսեց գոյատևել թերֆինանսավորման պայմաններում: Հասարակության մեջ տեղի ունեցան վերաարժեքավորումներ, սակայն, անկախ առկա խոչընդոտներից, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան շարունակեց գործել և տալ արդյունքներ ինչպես գիտության, այնպես էլ գիտամանկավարժական կադրերի պատրաստման բնագավառում: Գիտությունների ազգային ակադեմիայի վերջին տարիների ամենակարևոր ձեռքբերումներից մեկն էլ եղավ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը:

Հարարցազրույց ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն պրոֆեսոր **Ալբերտ Սարգսյանի** հետ

-Պրն. Սարգսյան, Գիտությունների ազգային ակադեմիան իրականացնում է կրթական գործունեություն մագիստրոսական ծրագրով, ո՞րն էր նպատակը, և ի՞նչ նոր հնարավորություններ է տալիս մագիստրոսների պատրաստումն ակադեմիական միջավայրում:

-Մագիստրոսական կրթությունն Ակադեմիայի համակարգում կազմակերպվեց բացառապես ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջոցներով՝ օգտագործելով ԳԱԱ տարածքային, գիտական, նյութատեխնիկական հնարավորությունները: ՀՀ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը նպատակ է հետապնդում արագացնելու անցումը կրթությունից դեպի գիտական գործունեություն: Մագիստրոսների պատրաստումը ակադեմիական միջավայրում թույլ է տալիս մագիստրանտներին հնարավորինս արագ ինտեգրվել գիտական հասարակայնությանը և ձեռք բերել գիտական մտածողություն: Ուսումնական ծրագրերով նախատեսված հետազոտական աշխատանքները տարվում են համապատասխան գիտահետազոտական հաստատություններում, ինչը թույլ է տալիս բարձրագույն կրթությանը հաղորդել ճկունություն, այն կողմնորոշել դեպի գիտության արդի հիմնախնդիրները, խորացնել մասնագիտական պատ-



ռաստվածությունը: Ակադեմիայի համակարգում մագիստրոսական կրթության իրականացումը խիստ անհրաժեշտ էր որակյալ կադրերի պատրաստման, հետագայում այդ կադրերով համակարգի գիտական կազմակերպությունները համալրելու առումով:

-Հետբուհական կրթական համակարգում ո՞ր մասնագիտություններն են առավել պահանջված:

-Այսօր ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան արդեն վերածվել է համբավ ունեցող ուսումնական հաստատության, այստեղ կրթությունը (առկա և հեռակա ուսուցմամբ) իրականացվում է 27 մասնագիտություններով: Մագիստրատուրայում հիմնականում դասավանդում են ՀՀ ԳԱԱ լավագույն գիտնականները (ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, գիտության դոկտորներ և թեկնածուներ): ԳԿՄԿ ամբիոնները տեղադրվում են անմիջապես գիտահետազոտական կազմակերպություններում, այսինքն՝ բուն կրթական գործունեությունը մեծ մասամբ իրականացվում է ԳԱԱ համակարգի գիտահետազոտական հաստատություններում: Յուրաքանչյուր մասնագիտության հանդեպ պահանջն ու հետաքրքրությունը տարբեր են: Այսօր ԳԿՄԿ մագիստրատուրայում սովորում են մոտ 1100 մագիստրոսներ՝ դեղագործական քիմիա, բնապահպանություն և բնօգտագործում, ռադիոտեխնիկա և կապ, կառավարում, ֆինանսներ, կենսատեխնոլոգիա, իրավագիտություն, հայոց լեզու և գրականություն, պատմություն, արևելագիտություն, միջազգային հարաբերություններ և այլ մասնագիտություններով:

-Կենտրոնում 2014 թվականից մեկնարկեց նաև հեռավար ուսուցման համակարգը, ըստ Ձեզ՝ որո՞նք են այս ուսուցման առանձնահատկությունները, և ի՞նչ սպասելիքներ ունեք:

-Կանգ չառնելով ձեռք բերված հաջողությունների վրա և պարբերաբար ձգտելով կրթության ոլորտում նորարարությունների ներդրման՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ՀՀ ԿԳ նախարարության Կրթական ծրագրերի կենտրոնի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2014թ. դեկտեմբերից սկսեց իրականացնել հեռավար լրացուցիչ կրթական ծրագիր, որի շրջանակներում հասարակական որոշակի խմբեր (շրջանավարտներ, գործազուրկներ, տնային տնտեսուհիներ, հատուկ կարիքներ ունեցող անձինք, քաղաքացիական ծառայողներ և այլք) կարող են հեռավար ձևով կրթություն ստանալ: Հեռավար դասընթացների առանձնահատկությունն այն է, որ ժամային սահմանափակումներ չկան, դասընթացներն ասինքրոն են, այսինքն՝ դասախոսը և ուսանողը միմյանց կարող են և չհանդիպել, շփումն իրականացվում է առցանց տարբերակով՝ ֆորումների, հեռավար գիտաժողովների և այլ միջոցներով, իսկ հանձնարարությունները ուսանողները հանձնում են առցանց՝ հեռավար ուսուցման հարթակում: Փորձը ցույց տվեց, որ հասարակության շրջանում շատ մեծ է հետաքրքրությունը առցանց դասընթացների նկատմամբ, որը շարունակական կրթության լավագույն մոդելն է: Մեր կողմից կամակերպված հեռավար 20 դասընթացներին արդեն իսկ մասնակցել և հաջողությամբ ավարտել է շուրջ 700 հոգի: Մենք ակնկալում ենք ապագայում որոշ մասնագիտությունների գծով իրականացնել նաև առցանց մագիստրոսական կրթական ծրագիր՝ մագիստրոսի կրթական աստիճանի շնորհմամբ:

-Հանրության շրջանում Ձեր կենտրոնի բարձր վարկանիշն ինչպե՞ս կմեկնաբանեք:

-ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցումը կազմակերպվել է 2004 թվականից: Այս տասը տարիների ընթացքում Կենտրոնն արձանագրել է բազմաթիվ հաջողություններ և ունեցել էական առաջընթաց՝ շնորհիվ հենց իր վարկանիշի և բարձր հեղինակության: Իսկ դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մագիստրոսական կրթական ծրագրերն իրականացվում են ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպություններում, այսինքն՝ ուսանողն, ընդունվելով մագիստրատուրա, հենց առաջին օրից ոտք է դնում գիտահետազոտական հաստատություն, շփվում ոլորտի առաջատար գիտնականների հետ, մասնակցում գիտահետազոտական աշխատանքներին: ■

Հետբուհական բարձրագույն կրթություն իրականացնող վարկանիշով առաջատար գիտակրթական կենտրոն